ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՍՍՀ-ՈՒՄ

ԴՈՐԱՅՐ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Մեր օրերում հանրային արտադրության զարգացումն ուղեկցվում է սոցիալ-տնտեսական համեմատաբար արագ տեղաշարժերով ինչպես ամբողջ ժողովրդական տնտեսության, այնպես էլ հատկապես արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում։ Գյուղատնտեսության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ այստեղ բնական գործոնների ազդեցության կողքին մեծ դեր են խաղում տնտեսության սոցիալական կառուցվածքի փոփոխությունները, որոնք մի կողմից վերաբերում են հանրային և անձնական տնտեսությանը, իսկ մյուս կողմից՝ հանրային սեկտորի ներսում կոլեկտիվ և պետական տնտեսությունների հարաբերակցությանը։ Վերջին տասնամյակի ընթացքում դրանց ավելանում է նաև միջտնտեսային ձեռնարկությունների դերի զգալի աճը։ Հասկանալի է, որ խոսքն ամենից առաջ այս ճյուղի հասարակական տնտեսական կառուցվածքի որակական տեղաշարժերի մասին է, որոնք վերաբերում են հատկապես սոցիալիստական սեփականության ձևերի զարգացմանը, բաշխման հարաբերությունների կատարելագործմանը և այլն։ Մեզ հետաքրքրում է առանձնապես հանրային գյուղատնտեսության երկու սեկտորների (կոլտնտեսային և սովխոզային) հարաբերակցությունն ու դրանց զարգացման որոշ միտումները և այդ առնչությամբ ծագող սոցիալ-տնտեսական որոշակի պրոբլեմները։ Նկատենք, որ եթե 1965 թ. հանրապետությունում կար 536 կոլեկտիվ տնտեսություն և 203 սովխոզ, ապա 1980 թ. հունվարի 1-ի տվյալներով կոլտնտեսությունների թիվը կազմեց 310, իսկ սովխոզներինը 439[1]։ Ընդ որում, սովխոզների թիվն ավելացել է և շարունակում է ավելանալ գերազանցապես թույլ կոլտնտեսությունների հաշվին։ Դրանք ամենից առաջ լեռնային շրջանների կոլտնտեսություններն են։ Եթե կոլտնտեսությունների սովխոզացման վերոհիշյալ միտումն առաջիկայում ևս պահպանվի, ապա մոտ ապագայում լեռնային շրջաններում սովխոզները կդառնան հանրային տնտեսության ոչ միայն տիրապետող, այլև հաճախ միակ ձևը։

Ո՞րն է այդ երևույթի պատճառը և հնարավոր հետևանքը, ինչպիսի՞ն է կոլտնտեսային և սովխոզային արտադրության համեմատական արդյունավետությունը։ Քննվող պրոբլեմն ունի մի շարք կողմեր։ Նախ կանդրադառնանք հարցի տնտեսական կողմին։

---

[1] *ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության և* «Народное хозяйство Армянской ССР за 60 лет» (Ереван, 1980) *ժողովածուի 99 էջի տվյալներով։*

Ինչպես պարզվել է ՀՍՍՀ գյուղմինիստրության գյուղատնտեսական էկոնոմիկայի ու կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտի ուսումնասիրություններից, տնտեսապես թույլ կոլտնտեսությունների հիման վրա կազմակերպված 135 սովխոզներում գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության ցուցանիշերն աճել են։ Դրանք զգալի չափով գերազանցում են այն կոլտնտեսությունների ցուցանիշները, որոնք վեր են ածվել սովխոզների և ընդհուպ մոտենում են սովխոզների համապատասխան ցուցանիշների մակարդակին։ Դա տեղի է ունեցել ոչ միայն պետության կողմից մեծ կապիտալ ներդրումների և տնտեսությունների նյութատեխնիկական բազայի ամրապնդման, այլև դրանց մասնագիտացման համար ավելի լավ պայմանների ստեղծման շնորհիվ։ Մասնագիտացված սովխոզների տնտեսական ցուցանիշների վերլուծությունը ևս վկայում է, որ տնտեսապես թույլ կոլտնտեսությունների վերածումը սովխոզների եղել է արդարացված և տնտեսական առումով արդյունավետ[2]։

Ինչպես տեսանք, ՀՍՍՀ գյուղմինիստրության գյուղատնտեսական էկոնոմիկայի ու կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտը ուսումնասիրության ընթացքում համեմատություն է կատարել նախկին կոլտնտեսությունների և դրանց հիման վրա կազմակերպված սովխոզների տնտեսական ցուցանիշների միջև։ Նման կտրվածքով հարցի ուսումնասիրությունը չի կարող սպառիչ լինել, քանի որ համեմատելով երեկվա կոլտնտեսության և այսօրվա սովխոզի տնտեսական ցուցանիշները, չենք կարող պատկերացում կազմել այն մասին, թե ինչպիսին է նոր կազմակերպված սովխոզների գործունեության մակարդակը հին սովխոզների համեմատությամբ։

Այս հարցը պարզելու նպատակով ընտրել ենք 150 հին սովխոզներ և դրանց 11 տարիների (1965—1975) գործունեության տնտեսական ցուցանիշները համեմատել հանրապետության սովխոզային ամբողջ սեկտորի ցուցանիշների հետ։ Այս սովխոզների թիվն ուսումնասիրվող ժամանակաշրջանում մնացել է անփոփոխ։ Միևնույն ժամանակ հանրապետության սովխոզների ընդհանուր թիվը, ինչպես նկատեցինք, տարեցտարի ավելանում է։ Ուստի և սովխոզային ամբողջ սեկտորի տնտեսական արդյունքների վրա զգալի ազդեցություն է գործել և գործում է նոր կազմակերպվող սովխոզների տնտեսավարման մակարդակը։ Այդ ազդեցությունից մեր ուսումնասիրած 150 հին սովխոզների գործունեության ցուցանիշները զերծ են։

Չնայած հանրապետությունում սովխոզների ընդհանուր թիվն անընդհատ ավելացել է, հանգեցնելով դրանց բացարձակ ցուցանիշների (աշխատողների թիվը, հողատարածությունները, հիմնական ֆոնդերը և այլն) աճին այնուամենայնիվ, հիշյալ 150 սովխոզներն այսօր էլ զգալի դեր են խաղում սովխոզային սեկտորի տնտեսական պոտենցիալի մեջ։ Այսպես, ըստ մեր հաշվարկների, 1975 թ. դրանց բաժին էր ընկնում սովխոզային սեկտորում զբաղված բոլոր աշխատողների ավելի քան 50, հիմնական ֆոնդերի 62,5 հողատարածությունների 55%-ից ավելին։

Տեսնենք, թե ինչ է վկայում մեր ընտրած 150 տնտեսությունների և հանրապետության ամբողջ սովխոզային սեկտորի տնտեսական արդյունքնե

---

[2] «Вопросы экономики сельского хозяйства Армении», вып. 7, Ереван, 1973 107—115.

համեմատությունը։ Նախօրոք նկատենք, որ այդ արդյունքները համադրելի դարձնելու համար տնտեսական ցուցանիշները պետք է հաշվարկվեն հողատարածության 100 հեկտարի կամ աշխատանքային ծախսումների մեկ միավորի հաշվով (աղյուսակ № 1)։

Աղյուսակ № 1

ՀՍՍՀ սովխոզների տնտեսական ցուցանիշների շարժը (1966—1975 թթ.)[3]

Ցուցանիշներ	Բոլոր սովխոզները			Համադրելի թվով (150) սովխոզները		
	1966 թ. 1970 թ.	1971 թ. 1975 թ.	շարժը %	1966 թ. 1970 թ.	1971 թ. 1975 թ.	շարժը %
սովխոզների թիվը	232	309	133	150	150	100
գյուղատնտեսական հողերի 100 հեկտարի հաշվով հիմնական ֆոնդեր (հազ. ռ.)	55,2	70,8	128	51,8	78,1	151
համախառն արտադրանք (1965 թ. համադրելի գներով)	16,1	19,5	119	15.9	19,6	123
ֆոնդահատույց	0,30	0,27	90	0,31	0,25	81
ծախսվել է մարդ-օրեր 100 մարդ-օրվա հաշվով	3380	3398	101	3393	2887	85
համախառն արտադրանք (ռ.)	489	574	117	467	692	148
աշխատատանքի վարձատրություն	361	443	123	347	491	141

Ինչպես տեսնում ենք, 150 սովխոզների տնտեսական գործունեության արդյունքները բոլոր ցուցանիշների գծով ավելի բարձր են, քան հանրապետության ամբողջ սովխոզային սեկտորինը։ Դա ամենից առաջ երևում է տնտեսական զարգացման տեմպերի օրինակով։ Այսպես, ընդհանուր առմամբ հանրապետության սովխոզային սեկտորի հիմնական ֆոնդերը մեկ հեկտարի հաշվով 1966—1975 թթ. ընթացքում ավելացել են 28, իսկ համախառն արտադրանքը՝ 19%-ով։ Համադրելի թվով այսինքն՝ 150 տնտեսությունների գծով այդ աճը կազմել է համապատասխանաբար 51 և 23%։

Այստեղից երևում է, որ և առաջին, և երկրորդ դեպքում ֆոնդահատույցի ցուցանիշը նկատելի չափով նվազել է։ Ընդ որում, 150 սովխոզներում այդ ցուցանիշի անկումն ավելի է աչքի ընկնում։ Այլ կերպ ասած, դրանցում արտադրության ավելացումը ձեռք է բերվել ավելի թանկ գնով, քան ամբողջ սովխոզային սեկտորում։ Դա կարելի է բացատրել նրանով, որ հին սովխոզները կարճ ժամանակում ձեռք են բերել արտադրության ավելի բարձր ֆոնդակինվածություն, մեքենայացում և այլն, քան նորերը, սակայն արտադրության զարգացման տեմպերը դեռևս չեն համապատասխանում այդ զինվածությանը։ Ընդհակառակը, նոր սովխոզներն արտադրության տեխնիկաղին-

---

3 Աղյուսակը կազմվել է հանրապետության բոլոր սովխոզների և առանձին վերցրած 150 սովխոզների տարեկան ամփոփ հաշվետվությունների տվյալների հիման վրա։ Ընդ որում, ուսումնասիրության մեջ ընդգրկվել են զուտ, այսպես ասած, ավանդական գյուղատնտեսական մասնագիտացում ունեցող սովխոզները. դուրս են թողնվել ագրոարդյունաբերական տիպի և առանձնահատուկ մասնագիտացված տնտեսությունները (խոզաբուծական, թռչնաբուծական ֆաբրիկաները, տոհմաբուծական, տնկարանային, ջերմոցային տնտեսություններ և այլն)։ Դրանով իսկ ընտրված սովխոզների ցուցանիշները համադրելի են մյուս սովխոզների, ինչպես նաև կոլտնտեսությունների ցուցանիշների հետ։

վածության տեմպերով դեռևս ետ են մնում, ուստի և արտադրության ու նրա ֆոնդազինվածության տեմպերի միջև խզումն ավելի քիչ է։

Սակայն 150 սովխոզներում ավելի ցածր ֆոնդահատույցը չպետք է դիտել որպես արտադրության ավելի ցածր արդյունավետություն։ Բանն այն է, որ արտադրության ավելի բարձր տեխնիկական հագեցվածությունը հին սովխոզներում հնարավորություն է տվել տնտեսելու զգալի չափով կենդանի աշխատանքի ծախսումներ։ Աղյուսակից պարզ երևում է, որ եթե սովխոզային ամբողջ սեկտորի առումով կենդանի աշխատանքի ծախսումները միավոր հողատարածության հաշվով 10 տարում մնացել են անփոփոխ (նույնիսկ մի փոքր ավելացել են), ապա հին սովխոզներում դրանք զգալի չափով կրճատվել են, քանի որ արտադրանքի ծավալն այդ տարիներին ավելացել է։ Դա նշանակում է, որ այստեղ աշխատանքի արտադրողականությունը նույնպես ավելացել է։ Աշխատանքային ծախսումների 100 մարդ-օրվա դիմաց բոլոր սովխոզներում ստացվել է 574 ռ. գյուղատնտեսական արտադրանք, իսկ հին սովխոզներում՝ 692 ռ. կամ 20,5%-ով ավելի։

Ինչպիսի՞ն է աշխատանքի արտադրողականության ու վարձատրության շարժը և հարաբերությունը սովխոզներում։ Հանրապետության սովխոզային ամբողջ սեկտորի առումով աշխատանքի արտադրողականությունն ավելացել է 17, իսկ վարձատրությունը՝ 23%-ով, այսինքն՝ ավելի բարձր տեմպերով։ Հետևաբար, այստեղ խախտվել է այդ երկու կատեգորիաների նորմալ, օպտիմալ հարաբերակցությունը։ Դա կարելի է բացատրել ամենից առաջ այն բանով, որ սովխոզային սեկտորն ամեն տարի համալրվելով նոր տնտեսություններով, կրել է վերջիններիս ցածր տնտեսավարության ազդեցությունը։ Նոր սովխոզները կազմակերպվել են մեծ մասամբ լեռնային շրջանների թույլ կոլտնտեսությունների հիման վրա, որոնցում աշխատանքի արտադրողականությունը, բնականաբար, ցածր էր, սակայն, անկախ դրանից, նոր սովխոզները, որպես պետական տնտեսություններ, պետք է ապահովեին իրենց աշխատողների վարձատրության որոշակի նվազագույն չափ, որի հետևանքով էլ վերջինիս տեմպերը գերազանցեցին աշխատանքի արտադրողականության աճի տեմպերին։

Ինչ վերաբերում է 150 սովխոզներին, ապա դրանցում աշխատանքի արտադրողականությունը նախ զգալիորեն ավելի բարձր է եղել և երկրորդ՝ նրա աճը գերազանցել է աշխատանքի վարձատրության աճի տեմպերին (դրանց աճը կազմել է համապատասխանաբար 48 և 41%), այլ խոսքով՝ ապահովվել է այդ երկու ցուցանիշների նորմալ հարաբերակցությունը։

Հանրապետության ամբողջ սովխոզային սեկտորի նկատմամբ մեր ընտրած համադրելի սովխոզների տնտեսավարման ավելի բարձր մակարդակը դժվար չէ բացատրել, եթե նկատի առնենք, որ դրանք կայուն թվով հին սովխոզներ են, որոնք ունեցել են տնտեսավարման երկար տարիների փորձ և ավելի ամուր նյութատեխնիկական բազա, որը և ապահովել է դրանց տնտեսական գործունեության համեմատաբար լավ արդյունքներ։ Ի տարբերություն դրան, նոր ստեղծվող սովխոզները պետք է հաղթահարեին մի շարք կազմակերպական և տնտեսական դժվարություններ, այդ իսկ պատճառով դրանց տնտեսավարման ցածր մակարդակը անխուսափելիորեն պետք է բացասաբար անդրադառնար սովխոզային ամբողջ սեկտորի միջին ցուցանիշների վրա։

Այժմ անդրադառնանք քննվող պրոբլեմի մյուս ոչ պակաս կարևոր կողմին՝ կոլտնտեսային և սովխոզային արտադրության համեմատությանը։ Ամենից առաջ, բնականաբար, հետաքրքիր է այդ երկու սեկտորների տնտեսական ցուցանիշների համեմատումը։ Առանձին քննելով այս հարցը[4], արդեն նշել ենք, որ ընդհանուր առմամբ հանրապետության կոլտնտեսային սեկտորում հողօգտագործման արդյունավետությունը (գյուղատնտեսական հողերի յուրաքանչյուր հեկտարից ստացվող արդյունքի արժեքը համադրելի դներով) գրեթե գերազանցում է սովխոզային սեկտորի նույն ցուցանիշը։ Կոլտնտեսային արտադրության այդ առավելությունն առանձնապես ակնհայտ է Արարատյան դաշտում։ Միևնույն ժամանակ կոլտնտեսային և սովխոզային արտադրության զարգացման տեմպերի համեմատությունը լեռնային շրջաններում հակառակ պատկերն է բացահայտում։ Պարզվում է, որ այդ շրջանների սովխոզները 8-րդ և 9-րդ հնգամյակների ընթացքում (1966—1975) գյուղատնտեսական հողերի մեկ հեկտարից ստացվող արդյունքի միջին տարեկան ծավալը շատ թե քիչ ավելացրել է, մինչդեռ կոլտնտեսություններում այն գրեթե մնացել է նախկին մակարդակի վրա։ Դրա հետևանքով լեռնային շրջանների սովխոզները մեկ հեկտարից ստացվող արդյունքի ծավալով ընդհուպ մոտեցել են կոլտնտեսություններին, իսկ աշխատանքի արտադրողականության բացարձակ ցուցանիշով (մեկ մարդ-օրվան ընկնող արտադրանքի մեծությամբ) արդեն գերազանցում են դրանց[5]։

Լեռնային շրջաններում սովխոզային սեկտորի տնտեսական ցուցանիշների այս առավելությունը պետք է բացատրել հիմնականում վերարտադրության բոլոր օղակներում (սկսած արտադրության նյութատեխնիկական մատակարարումից մինչև աշխատավորների վարձատրության որոշակի մակարդակի ապահովումը) պետության ֆինանսանյութական ակտիվ միջամտությամբ։

Ինչպես հայտնի է, սովխոզներում ավելի բարձր է աշխատավորների զբաղվածության մակարդակը, ավելի լավ են լուծվում սոցիալական ապահովման հարցերը և այլն։ Անտարակույս, սրանով պետք է բացատրել այն հանրահայտ երևույթը, որ մեր հանրապետության լեռնային շրջաններում շատ կոլտնտեսություններ վերածվել և վերածվում են սովխոզների։ Նշված ընդհանուր օրինաչափությունից բացի, կոլտնտեսային և սովխոզային սեկտորի ցուցանիշների ուսումնասիրությունն ըստ առանձին գյուղատնտեսական գոտիների, ի հայտ է բերում երկու կարևոր առանձնահատկություն։ Դրանցից առաջինն այն է, որ կոլտնտեսային սեկտորի ներսում աշխատավորների սոցիալ-տնտեսական պայմանների գոտիական շերտավորումը գրեթե մնում է նույնը, իսկ երբեմն էլ խորանում է, մինչդեռ սովխոզների համար ավելի բնորոշ է այդ պայմանների համահարթման միտումը։ Այլ կերպ ասած, սովխոզային սեկտորում ստեղծվում են աշխատողների վարձատրության և հանրային ֆոնդերի կուտակման շատ թե քիչ հավասար հնարավորություններ՝ բոլոր գոտիներում աշխատող ձեռնարկությունների համար[6]։

---

[4] «Վեներայան ուղիով», 1978, № 2, էջ 69—75։

[5] Նույն տեղում, էջ 71։

[6] Այս հարցի առանձին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1965—1975 թթ. աշխատանքի վարձատրության միջշրջանային շեղումները կոլտնտեսություններում մնացել են նույնը,

Երկրորդ առանձնահատկությունը կապված է տնտեսական մակարդակների գոտիական շերտավորման բնույթի հետ, որը կոլտնտեսություններում ու սովխոզներում միանգամայն այլ է և առայժմ խարսխվում է տարբեր շարժառիթների ու հիմքի վրա։ Պարզվում է, որ սովխոզային սեկտորի ներսում գոյություն ունեցող տնտեսական շերտավորումը չունի որոշակի և հաստատուն աշխարհագրություն։ Դա առավել ցայտուն է դրսևորվում աշխատանքի արտադրողականության և վարձատրության ցուցանիշների գոտիական տատանումների օրինակով։ Քանի որ աշխատանքի վարձատրությունը, որպես կանոն, կախված է նրա արտադրողականությունից, ապա բնական է սպասել, որ այդ երկու ցուցանիշների գոտիական տարբերակումը պետք է հիմնականում միատեսակ լինի։ Սակայն, եթե կոլտնտեսային սեկտորի ներսում դա այդպես է, ապա սովխոզներում՝ ոչ։ Այսպես, օրինակ, մեր հաշվարկների համաձայն 1971—1975 թթ. աշխատանքի արտադրողականության ամենաբարձր մակարդակը (այսինքն 100 մարդ-օրվա հաշվով համախառն արտադրանքի արժեքը) եղել է Արարատյան դաշտի սովխոզներում, նվազագույնը՝ Վայոց ձորում։ Ինչ վերաբերում է աշխատանքի վարձատրությանը, ապա դրա ամենաբարձր մակարդակն ապահովել են նախալեռնային գոտու, իսկ ամենացածրը՝ Լոռի-Փամբակի սովխոզները։ 8-րդ հնգամյակում լավ և վատ ցուցանիշներ ունեցող գոտիների միջև դարձյալ համապատասխանություն չի եղել։ Այսպիսով, սովխոզային սեկտորում աշխատանքի արտադրողականության և վարձատրության գոտիական շեղումները կարծես որևէ օրինաչափության չեն ենթարկվում (համենայն դեպս այդ երկու ցուցանիշների գոտիական տատանումները միմյանցից «անկախ» են ընթանում)։

Միանգամայն այլ է պատկերը կոլտնտեսային սեկտորում։ Այստեղ, ինչպես աշխատանքի արտադրողականության, այնպես էլ վարձատրության առավելագույն և նվազագույն ցուցանիշները կայուն կերպով կապված են որոշակի գոտիների հետ։ Հիշյալ երկու ցուցանիշների ամենաբարձր մակարդակը 8-րդ և 9-րդ հնգամյակների տարիներին եղել է Արարատյան դաշտում, իսկ ամենացածրը՝ Սևանի ավազանի կոլտնտեսություններում։ Այլ կերպ ասած, կոլտնտեսային սեկտորի տնտեսական ցուցանիշների գոտիական շերտավորումը ենթարկված է որոշակի օրինաչափության, մասնավորապես կոլտնտեսականների աշխատանքի վարձատրության գոտիական տարբերությունները համընկնում են աշխատանքի արտադրողականության ասպարեզում նույնպիսի տարբերությունների հետ։ Նույնն է վկայում նաև կոլտնտեսությունների շահութաբերության, կուտակման և տպառման ցուցանիշների ուսումնասիրությունը։

Այսպիսով, կոլտնտեսությունների տնտեսական գործունեության արդյունքները որոշակիորեն կախված են բնական պայմանների ազդեցությունից։ Իհարկե, դա բնավ չի նշանակում, որ սովխոզային արտադրությունը զերծ է բնական պայմանների ազդեցությունից։ Լավ և վատ հողակլիմայական պայմանները հավասարապես ազդում են և՛ կոլտնտեսությունների, և՛ սովխոզների գործունեության անմիջական սկզբնական արդյունքների, բեր-

---

մինչև սովխոզներում մեղմացել են։ Ընդ որում, ըստ շրջանների կոլտնտեսությունների վարձատրության առավելագույն և նվազագույն չափի հարաբերությունը եղել է 1:4,5, իսկ սովխոզի աշխատողներինը՝ 1:2,5 («Проблемы экономического выравнивания в сельском хозяйстве», Ереван, 1978, с. 19).

բատվության, եկամտաբերության վրա և այլն։ Սակայն եթե կոլտնտեսություններն իրենց գոյության առաջին օրվանից լինելով տնտեսաշվարկային ձեռնարկություններ, կուտակման և սպառման մակարդակը որոշում են ելնելով սեփական եկամուտներից, ապա սովխոզներում տնտեսական այդ երկու գործոնների կապը մինչև այժմ էլ խիստ պայմանական է, քանի որ պետությունն ակտիվորեն միջամտում է սովխոզներում վերարտադրության պրոցեսի գրեթե բոլոր օղակներին։

Վերևում անդրադարձանք աշխատանքի արտադրողականության և վարձատրության հարաբերության հարցին։ Այժմ բերենք մի քանի տվյալներ, որոնք բնութագրում են սովխոզային և կոլտնտեսային սեկտորների եկամտաբերությունը և կուտակումները (աղյուսակ № 2)։

Աղյուսակ № 2

Հայկական ՍՍՀ կոլտնտեսությունների ու սովխոզների եկամուտները և կուտակումները (1978)[7]

Ցուցանիշներ	Կոլտնտեսություններ	Սովխոզներ
1. ապրանքային արտադրանքի իրացումից ստացված գումարը (մլն ռ.)	204,2	304,9
2. զուտ եկամուտ (շահույթ) (մլն ռ.)	25,8	9,6
3. կապիտալ ներդրումներ »	33	90,7
4. այդ թվում պետբյուջեի հաշվին »	—	61,9
5. պետբանկի երկարաժամկետ վարկի հաշվին »	16,4	0,421
6. վարկերի տեսակարար կշիռը կապիտալ ներդրումների մեջ (%)	49,7	0,5
7. կապիտալ ներդրումները 100 մարդ-օրվա հաշվով (ռ.)	149	302

Աղյուսակից երևում է, որ սովխոզներն իրացրել ու վաճառել են շուրջ 1,5 անգամ ավելի շատ ապրանքային արտադրանք, քան կոլտնտեսությունները, սակայն բարձր ծախսերի հետևանքով սովխոզների իրացրած շահույթի գումարն անհամեմատ ավելին է, քան կոլտնտեսություններինը։ Սակայն սովխոզները կատարել են 2,7 անգամ ավելի կապիտալ ներդրումներ, քան կոլտնտեսությունները։ Այդ տարբերությունը բխում է նրանից, որ կուտակման աղբյուրները կոլտնտեսություններում ու սովխոզներում էապես տարբերվում են։ Կոլտնտեսությունները կուտակումներ են կատարում հիմնականում սեփական եկամուտների և պետբանկից ստացած երկարաժամկետ վարկերի հաշվին, որոնք ենթակա են վերադարձման՝ որոշակի տոկոսի վճարումով։ 1978 թ. բանկային վարկի հաշվին է կատարվել հանրապետության կոլտնտեսային սեկտորի կուտակումների գրեթե 50%-ը։ Ինչ վերաբերում է սովխոզներին, ապա դրանց կուտակումների վճռական մասը (շուրջ 2/3-ը) իրականացվում է պետական բյուջեի հաշվին։ Սեփական զուտ եկամուտը դեռևս քիչ դեր է խաղում կուտակումներ կատարելու գործում, իսկ բանկային վարկի դերը աննշան է։ Սովխոզների կապիտալ ներդրումների գումարը, ինչպես երևում է աղյուսակից, ավելի քան 10 անգամ գերազանցում է սեփական զուտ եկամուտը։

Վերը բերված տվյալները վկայում են, որ հանրապետության սովխոզների մեծ մասը դեռևս ըստ էության չի անցել լրիվ տնտեսական հաշվարկի, որը յուրաքանչյուր տնտեսությունից պահանջում է կատարել բոլոր ծախ-

7 Հաշվարկը կատարվել է ՀՍՍՀ կոլտնտեսությունների և սովխոզների տարեկան ամփոփ հաշվետվությունների տվյալների հիման վրա։

սերը, այդ թվում աշխատանքի վարձատրությունը, կուտակումները և այլն, սեփական միջոցների և աղբյուրների հաշվին։ Այդուհանդերձ, վերջին տասնամյակի ընթացքում երկրում այդ ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվել. այսպես, եթե 1963—1964 թթ. ընթացքում ՍՍՀՄ սովխոզների դրամական միջոցների շուրջ 59%-ը ստացվում էր սեփական արտադրանքի իրացումից, իսկ 41%-ը՝ պետական բյուջեից, ապա 1976—1977 թթ. այդ հարաբերությունը փոխվեց հօգուտ առաջին աղբյուրի և կազմեց 80:20։ Այսպիսով, սեփական միջոցների դերը սովխոզներում աճել է 21 կետով (59-ից մինչև 80%)։ Դա իր հերթին որոշակիորեն անդրադարձել է ընդլայնված վերարտադրության սեփական և պետական աղբյուրների հարաբերակցության վրա։ Ինչպես հայտնի է, վերարտադրության աղբյուրներն ըստ բնույթի երեքն են. տնտեսաշվարկային (սեփական դուտ եկամուտ կամ շահույթ), բյուջետային և վարկային։ Թե 1977 թ. ինչպիսին էր դրանց հարաբերակցությունը կոլտնտեսություններում և սովխոզներում, երևում է № 3 աղյուսակից։

Աղյուսակ № 3

Ընդլայնված վերարտադրության աղբյուրների հարաբերակցությունը կոլտնտեսություններում և սովխոզներում (1977)[9]

Ցուցանիշներ	ՍՍՀՄ		Հայկական ՍՍՀ	
	կոլտնտեսություններ	սովխոզներ	կոլտնտեսություններ	սովխոզներ
ընդլայնված վերարտադրության բոլոր աղբյուրները (%)	100	100	100	100
այդ թվում				
սեփական միջոցներ (շահույթ, ամորտիզացիա) %	60,9	9,5	50,3	38,0
պետբյուջեի միջոցներ %	6,8	72	—	54,1
պետբանկի երկարատև վարկեր %	32,3	18,5	59,7	7,9

Այսպիսով, երկրի կոլտնտեսություններում վերարտադրության հիմնական աղբյուրը սեփական միջոցներն են. զգալի դեր են խաղում նաև բանկային երկարատև վարկերը։ Վերջին տարիներին զգալի դրական տեղաշարժ է կատարվել սովխոզների վերարտադրության աղբյուրների միջև, մասնավորապես զգալի գեր են սկսում խաղալ բանկային վարկերը (18,5%)։ Սովխոզներն ավելի ու ավելի հաճախ են դիմում փոխառու (բանկային) միջոցների օգտագործմանը, որոնք աստիճանաբար գալիս են փոխարինելու բյուջետային անվերադարձ ֆինանսավորմանը։ Այլ կերպ ասած, գնալով նվազում է անվերադարձ պետական ֆինանսավորման դերը և համապատասխանաբար մեծանում վարկային միջոցներինը, որը, անտարակույս, նշանավորում է տնտեսաշվարկային հարաբերությունների ուժեղացումը։

Մեր հանրապետության կոլտնտեսությունները քննվող հարցի տեսակետից աչքի են ընկնում նրանով, որ վերարտադրության աղբյուրների մեջ սե-

---

[8] «Вопросы экономики», 1978, № 8, с. 71.

[9] «Плановое хозяйство». 1979, № 3, с. 91. «Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1979, № 3, էջ 58։

փական և փոխառու (բանկային) միջոցները հավասար դեր են խաղում։ Այլ կերպ ասած, նրանք կապիտալ ներդրումների կեսը կատարում են սեփական, մյուս կեսը՝ փոխառու միջոցների հաշվին։ Ինչ վերաբերում է սովխոզներին, ապա նրանցում վերարտադրության ընթացքում սեփական միջոցների դերն անհամեմատ ավելի մեծ է, քան ՍՍՀՄ սովխոզներում (38% և 9,5%)։ Դա, ինչ խոսք, լավ է և կարծես թե վկայում է տնտեսավարման անցնելու հնարավորությունների մասին։ Իրականում, սակայն, այդ հնարավորություններ չի իրացվում, քանի որ սեփական միջոցների պակասը սովխոզները հատուցում են ոչ թե բանկային վարկերի (որը միանգամայն օրինաչափ կլիներ), այլ գրեթե բացառապես պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման հաշվին։

Թե ինչու են սովխոզները ֆինանսավորումը «դուրդասում» վարկավորումից, դժվար չէ բացատրել։ Մի շարք սուբյեկտիվ պատճառների հետ միասին կան նաև օբյեկտիվ հանգամանքներ։ Սովխոզների մեծ մասն աշխատում է հանրապետության լեռնային շրջանների դժվարին պայմաններում։ Բնդ որում, դրանց մի զգալի մասը կազմակերպվել է վերջին տարիների ընթացքում և դեռևս չի հաղթահարել կազմակերպական և այլ բնույթի դժվարությունները, ուստի ժամանակ է պետք, որպեսզի այդ տնտեսություններն ամրանան, դառնան վարկունակ և բյուջետային միջոցների փոխարեն աստիճանաբար դիմեն վարկային միջոցների օգտագործմանը։

Այսպիսով, սովխոզներն ավելի շատ միջոցներ ունեն արտադրության զարգացման համար, սակայն դրանց վճռական մասը ստացվում է պետական բյուջեից։ Հետևաբար, վերարտադրությունն այստեղ չի խարսխվում ներքին աղբյուրների, ներքին տնտեսավարկային շարժառիթների վրա։ Ինչ վերաբերում է կոլտնտեսություններին, ապա հայտնի է, որ նրանք ստեղծված օրվանից աշխատել և աշխատում են տնտեսավարկի սկզբունքով։ Ճիշտ է, կոլտնտեսությունների տրամադրության տակ ավելի քիչ նյութական և ֆինանսական միջոցներ կան, քան սովխոզների, բայց անժխտելի է նաև այն փաստը, որ առաջիններում այդ միջոցներն ավելի խնայողաբար և արդյունավետ են օգտագործվում։ Ուստի և անդրադառնալով թույլ կոլտնտեսությունները սովխոզների վերածելու պրոցեսին, նշենք, որ այստեղ գործ ունենք հակասական երևույթի հետ, որի դրական կողմերը չի կարելի գերագնահատել կամ չափազանցնել, քանի որ դա կարող է հանգեցնել սխալ հետևանքների։ ՍՄԿԿ-ն իր ծրագրային փաստաթղթերում ու որոշումներում բազմիցս զգուշացրել է, որ զարգացման արդի փուլում անհրաժեշտ է ըստ ամենայնի օգտագործել սոցիալիստական սեփականության երկու հիմնական ձևերի առավելությունները և հնարավորությունները։ Դա հավասարապես վերաբերում է և կոլտնտեսային, և պետական սեփականությանը։

Այս կապակցությամբ հարց է ծագում, թե ինչպես անել, որպեսզի տնտեսության կոլտնտեսային ձևը մեր հանրապետության մի շարք շրջաններում ոչ թե փոխարինվի պետականով, այլ լրացվի՝ վերջինիս առավելություններով։ Թույլ կոլտնտեսությունների սովխոզացման հիմնական շարժառիթը, ինչպես նկատեցինք, նրանց տնտեսական դժվարությունների հաղթահարման հեռանկարն է՝ պետական ֆինանսավորման և նյութատեխնիկական մատակարարման հաշվին։ Ուստի և ավելի կոնկրետ մեր հարցադրումը կարելի է այսպես ձևակերպել. չի՞ կարելի արդյոք տնտեսապես թույլ կոլտնտեսություններին

պետության օգնությունն իրականացնել առանց նրանց սովխոզացման։ Մենք համոզված ենք, որ դա ոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է իրականացնել։ Այդ հնարավորությունը և անհրաժեշտությունը բխում է պետության և գյուղատնտեսական ձեռնարկությունների փոխադարձ տնտեսական հարաբերությունների ընդհանուր հաշվեկշռի ուսումնասիրությունից։ Բանն այն է, որ գյուղատնտեսական արտադրանքի մթերման ու մանրածախ գների գոյություն ունեցող համակարգը պետությանը հնարավորություն է տալիս գյուղատնտեսական ձեռնարկություններից գանձել նրանց մոտ գոյացող հավելյալ արդյունքի գերակշռող մասը, այդ թվում ամբողջ հողային ռենտան, որը կենտրոնացված է պետական բյուջեում, հատկապես այսպես կոչված շրջանառության հարկի ձևով։ Այդ արդյունքի զգալի մասը պետությունը նորից վերադարձնում է գյուղ գյուղատնտեսության մեջ կատարվող կապիտալ ներդրումների կամ սովխոզային արտադրության ուղղակի ֆինանսավորման և այլ ձևերով (այդ ձևերի մեջ որոշ տեղ է գրավում նաև թույլ կոլտնտեսությունների մոտ ժամանակ առ ժամանակ գոյացող պարտքերի դուրս գրումը)։

Մենք չենք առաջարկում կոլտնտեսային արտադրության ուղղակի ֆինանսավորում (սովխոզային արտադրության օրինակով)։ Դա պարզապես անհամատեղելի կլիներ կոլտնտեսային սեփականության բնույթի հետ։ Սակայն միանգամայն հնարավոր և անհրաժեշտ է տնտեսապես թույլ կոլտնտեսությունների նկատմամբ, որոնք աշխատում են վատթարագույն կոտիներում, կիրառել նրանց հանրորեն անհրաժեշտ ծախքերի փոխհատուցման այլ ձև պետական-հասարակական ֆոնդերի, իսկ ավելի ճիշտ՝ պետության մոտ կենտրոնացվող գյուղատնտեսության հավելյալ արդյունքի և ռենտային եկամուտների հաշվին։ Ընդ որում, տնտեսապես թույլ կոլտնտեսություններին հասարակական միջոցները պետք է տրամադրվեն ոչ թե, այսպես ասած, ֆինանսական օգնության կամ նպաստի ձևով, այլ ելնելով դրանց տնտեսական գործունեության արդյունքներից, օրինակ, արտադրած կամ իրացրած (պետությանը վաճառած) արտադրանքի ծավալից, այսինքն՝ տնտհաշվարկային հիմունքներով, միաժամանակ հաշվի առնելով այս կամ այն շրջանի (տնտեսության) օգտագործած հողերի տնտեսական գնահատման տվյալները։

Ցխորանալով այս առաջարկի մանրամասների մեջ, նշենք միայն, որ խոսքն ըստ էության ռենտային վճարների կամ հավելումների համակարգի մասին է, որը տարբեր ձևերով այժմ կիրառվում է Միության առանձին հանրապետություններում (էստոնական ՍՍՀ, Վրացական ՍՍՀ և այլն)։

Մեկ անգամ ևս շեշտենք հետևյալ հիմնական միտքը։ Մեր հանրապետության լեռնային շրջանների գերակշռող մասում գյուղատնտեսության բնական պայմանները խիստ անբարենպաստ են, կոլտնտեսային և սովխոզային արտադրության ծախսերը առավելագույնի են հասնում և շատ հաճախ չեն հատուցվում գործող մթերման գներով։ Այստեղից բխող դժվարությունները հաղթահարելու երկու ուղի կա։ Առաջինը պահանջում է զգալի չափով բարձրացնել գյուղատնտեսական արտադրանքի գնման-մթերման գները, որը նպատակահարմար չէ, քանի որ վերջին հաշվով կարող է հանգեցնել մանրածախ գների համապատասխան բարձրացմանը, դրանից բխող քոլոր անցանկալի հետևանքներով հանդերձ։ Մանրածախ գների բարձրացման ազդեցությունը չեզոքացնելու համար, իր հերթին, կպահանջվեր համա-

պատասխանորեն բարձրացնել բնակչության բոլոր խավերի դրամական եկամուտները (աշխատավարձը, թոշակները, կենսաթոշակները և այլն), որի հետևանքով անհրաժեշտություն կառաջանար վերակառուցել գների և եկամուտների բարդ շղթայի գոյություն ունեցող համակարգը։ Ինչ խոսք, որ այդ ուղին և դյուրին չէ, և չի համապատասխանում կուսակցության տնտեսական քաղաքականության արդի պահանջներին։ Հիշեցնենք, որ ՍՄԿԿ XXV համագումարի պահանջներից մեկն է. «շարունակել պարենային և ոչ պարենային հիմնական ապրանքների պետական մանրածախ գների կայունությունն ապահովելու գիծը»[10]։

Լեռնային շրջանների հասարակական ծախսերի հատուցման երկրորդ հիմնական ուղին, մեր համոզմամբ, կապված է ռենտային հավելավճարների տնտեսաշվարկային համակարգի իրականացման հետ։ Քանի որ վատթարագույն բնատնտեսական պայմաններում աշխատող ձեռնարկությունները պետության նկատմամբ կատարում են որոշակի տնտեսական պարտավորություններ գյուղատնտեսական արտադրանքի մթերումների, ինչպես նաև այլ գծերով, ապա միանգամայն ակնհայտ է, որ դրանց կատարած գոնե միջին ծախսերը նույնպես ենթակա են հասարակական հատուցման՝ ապրանքային տնտեսության օրենքների օբյեկտիվ պահանջների հիման վրա։ Եթե այդ փոխհատուցումը չի կարող կատարվել գների բարձրացման միջոցով, որի մասին արդեն խոսեցինք, ապա կարող է և պետք է կատարվի ֆինանսական, ռենտային-հարկային եղանակներով, ձևերով։

Լեռնային շրջանների կոլտնտեսություններին պետության ցույց տված օգնությունը կարող է ունենալ նաև ոչ անմիջական արտադրական բնույթ։ Պետությունը որոշակի օգնություն պետք է ցույց տա հատկապես տնտեսապես թույլ կոլտնտեսություններին՝ ոչ արտադրական ոլորտի օբյեկտների շինարարությունը ֆինանսավորելու միջոցով, որը կապահովի բնական տարբեր գոտիներում աշխատող մարդկանց կենսապայմանների աստիճանական մերձեցումը։

Վերջապես, գոյություն ունի կոլտնտեսային սեկտորի «թույլ օղակներին» օգնություն ցույց տալու մեկ այլ ձև, որը կապված է տնտեսությունների ավելի խոր մասնագիտացման հետ և պահանջում է լեռնային շրջանների տնտեսությունների մի մասն ազատել գյուղատնտեսական արդյունքի որոշ տեսակների մթերումների կենտրոնացված առաջադրանքից։ Դա նրանց հնարավորություն կտա ավելի լավ, նպատակասլաց օգտագործել հողային, աշխատանքային և նյութական ռեսուրսները, դրանք կենտրոնացնելով երկուերեք ապրանքային ճյուղերի արագ զարգացման ուղղությամբ։

Տնտեսապես թույլ կոլտնտեսությունների տնտեսական պայմանների բարելավման վերը նշված ուղիները մի նպատակ ունեն՝ ապահովել այդ կոլտնտեսությունների վերարտադրությունը սեփական միջոցների հիման վրա, գործի դնելով նրանց զարգացման ներքին ազդակները։ Հասնել դրան, նշանակում է չեզոքացնել, ի չիք դարձնել տնտեսապես թույլ կոլտնտեսությունների սովխոզացման այն միտումի ներքին շարժառիթները, որոնք միանգամայն պարզորոշ կերպով դրսևորվում են այսօր։

---

10 «ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 322։

Պետք է նկատել, որ Միության մյուս հանրապետություններում կոլտնտեսությունների թիվը վերջին տարիներին կայունացել է։ Դա նշանակում է, որ դադարեցված է դրանց վերածումը սովխոզների։ Ցավոք, նույնը չի կարելի ասել մեր հանրապետության մասին։ Վերջին 15 տարիների ընթացքում, ինչպես տեսանք, ՀՍՍՀ կոլտնտեսությունների թիվը պակասեց 226-ով. 1965 թ. 536 կոլտնտեսության դիմաց այսօր ունենք միայն 310-ը։ Ընդ որում, միայն 1975 թ. հետո 171 կոլտնտեսություն վերածվեցին սովխոզների[11]։ Այդ երևույթը պատահական չէ և վկայում է մեր հանրապետության գյուղատնտեսության պայմանների բացառիկ անբարենպաստ լինելու մասին։ Իհարկե, կասկած չկա, որ նշված կոլտնտեսությունների վերածումը սովխոզների հիմնականում տնտեսապես արդարացված, հիմնավորված է եղել, և դրանց գործունեությունը որպես պետական տնտեսություն՝ տվել է դրական արդյունքներ։ Միաժամանակ չենք կարող անվերապահորեն պնդել, որ կոլտնտեսությունների վերածումը սովխոզների բոլոր դեպքերում դրական արդյունքով է պսակվում։

Տնտեսության կոլտնտեսային ձևից սովխոզայինին անցնելը թեկուզև լուծում է նրա ֆինանսական դժվարությունները, սակայն ըստ էության չի փոխում վերարտադրության տնտեսական պրոբլեմների բնույթը։ Այն փոխում է վերջիններիս արտաքին ձևը միայն, կամ երկարաձգում դրանց լուծման ժամկետները։ Եվ իրոք, եթե որևէ թույլ կոլտնտեսություն անկարող է իրականացնել վերարտադրությունը տնտեսհաշվարկի սկզբունքներով, ապա սովխոզի վերածելը հազիվ թե անմիջապես վերացնի այդ անկարողությունը, քանի որ այս դեպքում տնտեսության հոգսերը պարզապես փոխադրվում են պետական բյուջեի վրա։ Մինչդեռ, ամբողջ խնդիրն այն է, որպեսզի գտնվեն և գործի դրվեն տնտեսպես թույլ կոլտնտեսությունների էկոնոմիկայի զարգացման ներքին շարժառիթներն ու խթանները։ Խոսքն ամենից առաջ մեր հանրապետության լեռնային շրջանների մասին է։ Այստեղ կոլտնտեսությունների թիվը այսօր շուրջ 2 անգամ զիջում է սովխոզների թվին (195 և 380) և հետագա նվազման միտում ունի։ Ուստի, եթե հրատապ միջոցներ չձեռնարկվեն, ապա ոչ հեռու ապագայում կստեղծվի մի իրավիճակ, երբ լեռնային շրջաններում կունենանք չնչին բացառությամբ միայն սովխոզներ, իսկ կոլտնտեսություններ միայն Արարատյան դաշտում։

Ինչ խոսք, որ այդպիսի հեռանկարը լուրջ մտորումների առիթ է տալիս, առաջացնելով հետևյալ պարադոքսը. տնտեսության պետական (համժողովրդական) ձևն անտարակույս ավելի առաջադիմական է կոլտնտեսայինի (կոոպերատիվ) համեմատ, և վերջինս պետք է հասնի առաջինին՝ արտադրողական ուժերի բարձր մակարդակի զարգացման հետևանքով։ Մինչդեռ, մեր լեռնային շրջաններում հանրային գյուղատնտեսության կոլտնտեսային ձևն արագորեն վեր է ածվում պետականի՝ առաջինի թերզարգացման պատճառով։ Բնականո՞ն է արդյոք հանրային սեփականության զարգացման այդպիսի եղանակը. իհարկե, ոչ։

Հանրային գյուղատնտեսության կոլտնտեսային ձևն այսօր ունի զարգացման ոչ նվազ ռեզերվներ ու հնարավորություններ, քան սովխոզայինը։ Իսկ որ ամենագլխավորն է, այսօր դիմել թույլ կոլտնտեսությունների սովխո-

---

[11] «Народное хозяйство Армянской ССР в 1978 году», Ереван, 1979, с. 65.

գացմանը, նշանակում է շրջանցել, թռիչք կատարել զարգացման դեռևս անավարտ փուլի վրայով, անթույլատրելի հապճեպություն ցուցաբերել ապագան «արագացնելու» ուղղությամբ։

Եվ այսպես, հանրային տնտեսության զարգացումը լեռնային շրջաններում պահանջում է. առաջինը, ավելի մեծ ներդրումներ այդ շրջանների գյուղատնտեսության ինտենսիվացման և եղած ռեսուրսների լրիվ օգտագործման նպատակով։ Ընդ որում, հիշյալ ներդրումները պետք է կատարվեն հասարակության կողմից՝ ինչպես պետական, այնպես էլ կոլտնտեսային սեկտորում, նկատի ունենալով հատկապես վերջինիս նյութա-տեխնիկական բազան սովխոզների մակարդակին հասցնելու անհրաժեշտությունը։ Երկրորդ, նյութական միջոցներից բացի, ոչ պակաս կարևոր է նաև լեռնային շրջանների համար սոցիալ-տնտեսական լծակների և խթանների առանձնահատուկ համակարգի կիրառումը, որը թույլ կտա առանց լրացուցիչ միջոցներ ծախսելու գործի դնելու հանրային տնտեսության զարգացման ներքին տնտեսավարկային շարժառիթները։ Այս հարցերը հատուկ լուսաբանման կարիք ունեն։ Նշենք միայն, որ չափազանց ուսանելի է Վրացական ՍՍՀ-ում վերջերս կիրառված փորձը, որի շնորհիվ նախկինում ետ մնացող Աբաշայի շրջանը շեշտակի վերելք ապրեց և այժմ գրավել է գյուղատնտեսության ասպարեզի աշխատողների համակ ուշադրությունը[12]։

Զարգացած սոցիալիստական հասարակարգի տնտեսական մեխանիզմի խելացի օգտագործումը յուրաքանչյուր հանրապետության, մարզի կամ շրջանի կոնկրետ պայմանների հաշվառումով այն հզոր զենքն է, որի միջոցով կարելի է տանել հանրային գյուղատնտեսությունը և գյուղը՝ մեր ցանկացած հունով։

НЕКОТОРЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ОБЩЕСТВЕННОГО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В АРМ. ССР

НОРАИР МАНАСЕРЯН

Резюме

Из анализа основных экономических показателей колхозного и совхозного секторов следует, что в целом по колхозному сектору продуктивность землепользования и темпы его увеличения в расчете на единицу площади значительно выше, чем в совхозах. В то же время в горных районах республики это преимущество—за совхозами, здесь также выше производительность и оплата труда. Этим объясняется превращение многих колхозов горных районов в совхозы. Так, из 536 колхозов республики в 1965 г. к началу 1980 г. осталось всего 310, а число совхозов за это время возросло с 203 до 439, главным образом за счет превращения в совхозы экономически слабых колхозов.

[12] Константин Лордкипанидзе, Что произошло в Абаше?, Тбилиси, 1979.

Экономические показатели вновь образованных совхозов—выход продукции с I га, производительность труда и др., значительно превышают показатели бывших колхозов, на базе которых они были организованы.

В то же время превращение экономически слабых колхозов в совхозы—сложное противоречивое явление. Оно решает финансовые трудности горных хозяйств, но не решает по существу экономических проблем воспроизводства. Решение последних требует, во-первых, укрепления материально-технической базы колхозов горных районов с помощью государства, во-вторых, применения специфической системы экономического стимулирования колхозов и колхозников этих районов, реализации внутренних, хозрасчетных стимулов развития общественного хозяйства.